

նապաստանութեան գործին եւ վերջինը, թէ- եւ կարենորը, բայց խանգարուեցաւ :

Ապրիլ 17-ին թշնամին համեմատաբար ստտկացուց յարձակողականը, հասցուց ծայր ատիճանի, երբ միաժամանակ սկսեց գործածել Հաւան-Թօփ ըստած հին ձեւի ոմբարձակ հրանօթը (մորաիր) :

Ատոնք երեք հատ էին, երկուքը՝ միջակ եւ մէկը՝ մեծ : Սկզբին երեքն ալ կը գործածէին բերդէն : Մեծի գնդակները կը կռուէին 5 լիտր, իսկ փոքրերունը՝ 3-4 լիտր : Գնդակները 2-3 մատ թանձր պատեր ունէին, մէջը պարունակելով մինչեւ 1 օխայ վառօղ : Ատոնք իրենց բերնին ունէին բռնկող պատրոյգներ, որոնք արձակուելով կը հաղորդէին կրակի վառօղին, այսպիսով քանդիչ ուղմբին դերը կը կատարէին : Թէեւ հետո չէին ձգուեր, բայց մեծ աւերներ գործեցին եւ զոհեր պատճառեցին ժողովուրդին մէջ : Հրասանդը գնդակը բերդէն կը ձգէր բարձր, յետոյ ցած ընկնելով տուներու վրայ կը ծակէր երեք առաստաղները միանգամ ու կը պայթէր փշուր փշուր կտորտանքներ սփռելով չորս կողմը : Յաճախ պատահեց, որ պայթումը տեղի կ'ունենար ժողովուրդով հոծ համախմբումներու մէջ՝ 4-5 հոգի մէկանց վիրաւորելով :

Համախմբումներով ապրող ժողովուրդը վառնդի դէմ ապահովելու համար, կարգադրուեցաւ ցորեկին՝ շինութեանց գեանափոր յարկերու տակը պատսպարուիլ : Արդարեւ, այս միջոցաւ կարելի եղաւ փրկել հասարակութիւնը ծանր զփրախտութիւններէ :

Երկու օր վերջը Հաւան թօփն ալ դարձաւ սովորական եւ անոր պայթումները՝ մեծ մասամբ անհետեւանք :

Միւս կողմէ, հրասանդը իր պատճառած վնասներու հետ արժէքւոր օգտակարութիւն

ունեցաւ, մատակարարելով առատ վառօղ, որուն խիտ կարիք կար : Արձակուած ուղմբ գնդակները յաճախ չէին պայթեր : Եւ աւելին, մինչեւ պայթելը, անխախտ պատանինքը վրայ հասնելով, պատրոյգը դուրս կը քաշէին :

Փորձով տեսանք, որ գնդակը հրասանդի բերնէն դուրս գալով ամենաշուտ 15 երկվայրկեանէն, ամենաուշ 35 երկվայրկեանէն կը պայթէր : Ուստի լինիւմ ուղմբը երբ կ'իյնար գետինը չպայթած, մեր առիւծ պատանինքը իրար հետ մրցման մտած՝ վրայ կը հասնէին պատրոյգը դուրս քաշելու, յետոյ գրկած կուրծքերուն Շտաբը կը հասնէին ուրախ ձիւջով՝ «Վառօղ, վառօղ»... :

Ո՛հ յորքան արիութիւն ցոյց կուտային մեր այդ մատղաջ հերոսները, թուշերը կարմիր, աչքերը կրակոտ, անհանդիստ կը հետեւէին ընկած գնդակներուն, որոնք օդին մէջ սեւ թռչունի մը պէս նկատելի՝ վար կ'իյնային :

Վառօղով լի ուղմբեր որսացող 10-15 տարու պատանինքնէն էին՝ Բարդէն Իսաջանեան, Մարտիրոս Գէօրջեան, Յովհաննէս Աղբասէրեան, ծուռ անուշի մանչ Ոստանիկ, աւելորդ անունով Ուռուս, Ասլան Ասլանեան եւ քանի մը ուրիշներ, որոնք միեւնոյն ժամանակ սուրհանդակի գործեր ալ կը կատարէին : Անխուսափելիօրէն ունեցանք զոհեր, ինչպէս Աղբասէրեան Յովհաննէս, Գէօրջեան Մարտիրոս, Մախսուղեան Երուանդ, Հայդուղեան Յակօրիկ :

Ապրող եւ նահատակ փոքրիկ հերոսներու ջանքերով, ոչ միայն առատօրէն հայթայթուեցաւ ամենօրեայ գործածութեան վառօղ, այլ եւ իրրեւ պահեստ ունեցանք 100 օխայի մօտ աւելի վառօղ :

(Շարունակելի)

